

**Ա.Պետրոսյանի «Ձկնորսական մշակույթը Հայաստանում,
պատմաազգրական ուսումնասիրություն», ՀԳՄ հրատ., 2015, 113 էջ**

Հայաստանի նախարտադրական կենցաղի ուսումնասիրության մեջ ուշագրավ է յուրացնող տնտեսաձևերերի հետազոտման հիմնահարցը: Այն անցնելով հազարամյակներով՝ հարատևել է մինչև մեր ժամանակները՝ կորցնելով երբեմնի նշանակությունը: Ազգագրագետ հեղինակը հնագիտական, մատենագրական, բանահյուսական, վիճագրական, գրավոր, թանգարանային, արխիվային և այլ նյութերի համեմատական վերլուծության շնորհիվ բացահայտել է ձկնորսության ժողովրդական եղանակները, աշխատանքային գործիքների զարգացման ու կատարելագործման ընթացքը, զբաղմունքով պայմանավորված ժողովրդական փորձն ու հմտությունները, հավատալիքների թեև ոչ հարուստ, սակայն ուշագրավ համակարգը, դրանց վերապրուկային դրսևորումները:

Վերոհիշյալ աղբյուրներում առկա վկայությունները նա հարստացրել է ՀՀ մի շարք պատմաազգագրական շրջաններում՝ գրառելով դաշտային ազգագրական նյութերը, որոնք կազմում են գրախոսվող շարադրանքի հենքը:

Այդ նյութերը գրառվել են 20-րդ դարի երկրորդ կեսին ԵՊՀ, «Գեղարքունիք» և «Ձանգեզուր» արշավախմբերի գործունեության («արշավախմբի ղեկավար՝ Ա.Պետրոսյան»), ինչպես նաև անհատական գործուղումների ժամանակ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, ընդարձակ պատմաազգագրական ակնարկից, երեք գլուխներից, ամփոփումից, օգտագործված գրականության ցանկից և հավելված-տախտակներից:

Պատմաազգագրական ակնարկում հեղինակը հենվելով բազմաբնույթ նյութերի վրա՝ անդրադարձել է ձկնորսության զարգացման, անցած փուլերի, Սևանի ավազանի ձկնորսությունը կապալով տալու, ձկնորսությունից ստացած եկամուտների, ձկան որսի արգելքի տարիներ սահմանելու, լճի ուսումնասիրման և նավագնացություն հաստատելու, կապալային ձկնորսությունը Արևելյան Հայաստանի մյուս գետերում ու լճերում կիրառելու, Սևանի միաբանությանը հատկացված ձկնորսական տեղամասի շահագործման և այլ հարցերի:

Ձկնորսության ժողովրդական եղանակները գլխում Ա.Պետրոսյանը քննարկել է գետային ու լճային ձկնորսության խնդիրները: Գետային ձկնորսության եղանակներից անդրադարձել է ձեռքով, նիզակ-եռաժանիով «խշտ ու խշտար»-ով, գետի չանգալով, բահով, պարանով, սալայով ու կողովով, ձկնորսական թարփով, ձկնորսական բանդով, թարփի սալայով, գետի ճյուղը կտրելով, ծվարով «ավլաղ»-ով, գոլայով, լենդը սիզգայով, ջրաղացի թարփով, «քարե ծուղակ»-ով, ձեռաց թռռով, տկալաստով,

«սանտերք»-ով, մուրճով, կարթով, պարանով, թոկով և այլ եղանակներով արվող ձկնորսությանը: Լճային ձկնորսության եղանակներից անդրադարձել է եռաժանիով ու նիզակով, չանգալով, լճի կամ պարանի կեռիկով, ծիծեռով կամ փայլախայծով, կարթավոր ուռկանով «տուզախ», դրվող կամ կանգնեցվող ցանցով, լճային նետովող ցանցով, «ակլատիզ», ցանցավոր ուռկանով, անշարժ ուռկանով և այլ ձկնորսական եղանակներին:

Արևելյան Հայաստանի գետային ու լճային ձկնորսության ժողովրդական եղանակների ուսումնասիրությունը հեղինակին բերել է այն հետևության, որ դրանք հանդես են եկել որոշակի ինքնատիպությամբ՝ ձեռք բերելով ռեզիոնալ առանձնահատկություններ: Միաժամանակ ուղեկցվել են համահայկական ձկնորսական մշակույթի բազմաթիվ ընդհանրություններով:

Ձկան և ձկնորսության հետ կապված հավատալիքները շարադրելիս հեղինակն այդ բնագավառին վերաբերող նյութերը տիպաբանել է նմանողական, «պահպանիչ» և «բուժիչ» բնույթի ծեսերի ու արարողությունների, որոնք նպատակ են ունեցել ապահովել ձկան որսի բարեհաջող իրականացումը, աշխատանքային գործիքների ու որսածների հաջողության ապահովումը, Վան և Սևան լճերը հանդարտեցնելուն, ն փոթորիկները մեղմելու, չար աչքը կոտորակելուն:

Մենագրության վերջին գլուխը նվիրված է ձկան և ձկնորսության հետ կապված բառերին ու դարձվածքներին: Վերջին մի քանի տասնամյակներին գետային և լճային ձկնորսությունը դուրս է մղվել կենցաղից, մոռացության է տրվել դրանցով պայմանավորված հարուստ տերմինաբանությունը: Հեղինակի բնորոշմամբ դրանց աննշան մասն է տեղ գտել հայտնի բառարաններում, շատ դեպքերում խիստ նեղացվել է բառի իմաստը: Հեղինակի կողմից ձեռք բերված 250 բառերից ու դարձվածքներից միայն 30-ն է տեղ գտել բառարաններում, մյուսները շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Այդ բառերն ու դարձվածքներն ընդգրկում են ձկնորսական մշակույթի աշխատանքային եղանակները, աշխատանքային գործիքների տեխնիկա-տեխնոլոգիական, զբաղմունքի սոցիալ-ծիսական, պատմամշակութային և այլ որակներ, որոնք ամբողջացնում են ձկնորսական մշակույթի ձևավորման ու զարգացման անցած ուղին՝ հսկայական տարածության ու ժամանակի մեջ:

Սևանա լիճը կապալով շահագործելու, ձկնորսական տեղամասերի բաժանելու, ձկան որսի արգելքի տարիները սահմանելու և այլ միջոցների փորձի կիրառումը մեր օրերում հնարավոր կդարձնի Սևանա լճի ինչպես պահպանման, այնպես էլ զանգվածային թալանը կանխելուն:

Կարևոր է 41 տախտակների առկայությունը աշխատանքում, որը հեղինակը ձեռք է բերել տարբեր աղբյուրներից և հատկապես իր դաշտային հավաքչական աշխա-

տանքների ժամանակ: Այդ նյութերը շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, կարող են օգտագործվել թանգարանների ցուցադրություններում:

Ա.Պետրոսյանի գրախոսվող մենագրությունը նրա երկու տասնամյակների պրպտումների արդյունք է՝ գրված գիտական պատշաճ մակարդակով, նկարների հետ մեկտեղ լուրջ ներդրում է հայ ազգության ասպարեզում և հանդիսանում է բացառիկ աղբյուր վերոհիշյալ խնդիրների պարզաբանման համար:

Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ՝
պ.գ.դ., պրոֆ. Հ.Ավետիսյան